ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ք.Երևան **18 դեկտեմբերի, 2017թ.**

ՈՐՈՇՈՒՄ
ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ վարչապետի՝ 2015 թվականի ապրիլի 18-ի «Հայաստանի Հանրապետության կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի կազմում հասարակական կազմակերպությունների ներգրավման նպատակով անցկացվող մրցույթի և ռոտացիայի կարգը սահմանելու մասին» N 300-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում)՝ 2017 թվականի փետրվարի 6-ի թիվ 53-Ա հրամանով ստեղծված Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի կազմում հասարակական կազմակերպությունների ներգրավման գործընթացի իրականացման նպատակով ստեղծված հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) միաձայն

ՈՐՈՇԵՑ՝

1. «Հայաստանի գործատուների հանրապետական միություն» հասարակական կազմակերպության կողմից ներկայացված հայտին ընթացք չտալ՝ հաշվի առնելով հայտ ներկայացրած հասարակական կազմակերպության կողմից Որոշման հավելվածի 14-րդ կետով սահմանված ժամկետում թերությունները չշտկելը:

2. Դիմել ՀՀ արդարադատության նախարարին՝ կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի կազմում հասարակական կազմակերպությունների ներգրավման նպատակով անցկացվող մրցույթի արդյունքների մասին ՀՀ վարչապետին զեկուցելու նպատակով:

3. Դիմել ՀՀ արդարադատության նախարարին՝ վարչապետի համաձայնությամբ հասարակական կազմակերպությունների ներգրավման նոր մրցույթ անցկացնելու նպատակով՝ հաշվի առնելով Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի՝ գործարար ոլորտը ներկայացնող հասարակական կազմակերպությունների համար նախատեսված թափուր տեղերը համալրելու անհրաժեշտությունը:

Հանձնաժողովի նախագահ՝ ՍՈՒՐԵՆ ՔՐՄՈՅԱՆ

Հանձնաժողովի անդամներ՝

ԿԱՐԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Հանձնաժողովի քարտուղար՝ ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ